ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 24-ին, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, կատարվեց Սպիտակի տարածաշրջանի Սարահարթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու վերաօծման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի՝ օծվեցին Ս. Սեղանը, Խորանը, Մկրտության սուրբ ավազանը: Արարողության ավարտին նորաօծ եկեղեցում անդրանիկ Պատարագ մատուցեց Արևաշողի հոգևոր հովիվ Տ. Մովսես քհն. Աշուրյանը:

Սարահարթի Ս. Աստվածածին եկեղեցին թեմական առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանի առաջնորդության ընթացքում կառուցված կամ վերաբացված թվով 25-րդ եկեղեցին է:

Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, 1884 թ., երբ սարահարթցիների նախնիները Բասենից գաղթեցին Սարահարթ գյուղ: 1988 թ. երկրաշարժից Ս. Աստվածածինն ավերվեց և խոնարհված վիճակում հասավ մինչև մեր օրերը: Ի ուրախություն սարահարթցիների՝ կիսաքանդ եկեղեցին վերակառուցվեց՝ բարերարությամբ ամերիկահայ մեր հայրենակցի, արմատներով սարահարթցի, բարեհիշատակ Աշոտ Մարտիրոսյանի:

Հիշարժան օր էր սարահարթցիների համար, քանզի վերակառուցված եկեղեցու զանգերը կրկին ղողանջեցին ու սրբազան արարողության հրավիրեցին բարեպաշտ հավատացյալներին: Եկեղեցու օծման արարողության ավարտին Սեպուհ Սրբազանն իր օրհնության ու շնորհավորական խոսքն ուղղեց սարահարթցիներին և բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր Տիրախնամ թեմում ևս մեկ աղոթքի տուն իր դռները բացեց: Շնորհիվ ձեր համագյուղացի՝ բարեհիշատակ Աշոտ Մարտիրոսյանի, կրկին վեր հառնեց խոնարհված Ս. Աստվածածին եկեղեցին: Այսուհետ այս սուրբ եկեղեցում քրիստոնեական արժեքների և հոգևոր գիտելիքների ուսուցման գործնական հնարավորություն է ստեղծվում մեր սիրասուն զավակների համար: Ուստի, սիրելի՛ սարահարթցիներ, ձեզ ենք հանձնում հավատքի բանալին՝ այս սուրբ եկեղեցին ու ավետարանը: Այսուհետ ձեր սրտաբուխ աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող նվիրվեն մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր անկախ հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության համար»:

Արարողությանը ներկա էին մարզպետ Ա. Քոչինյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, համայնքապետեր, բազմաթիվ հյուրեր և համայնքի անդամներ:

Սուրբ Պատարագի ավարտին մկրտվեցին տասնյակ սարահարթցիներ, ապա ներկաներին բաշխվեց երախտիքի ու գոհության մատաղ՝ գյուղացիների արևշատության, հարազատ գյուղի անսասանության և Մայր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ